ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՇԱԼՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(7 դեկտեմբերի 2008 թ.)

,Անվամբ Հոր և Որդվո և Հոգվույն Սրբո. Ամենե

«Այս աշխարհիս վրա նեղություն պիտի ունենաք, բայց քաջալերվեցե՛ք, որովհետև Ես հաղթեցի աշխարհին»։

(Հովհ. ԺԶ 33)

Այսպես կըսե մեր Տեր Հիսուս Քրիստոսը Իրեն հետևողներուն։ Չի խոստանար անոնց կյանք մը առանց նեղության, առանց վտանգի, առանց արկածի, առանց երկրաշարժի։ Չի խոստանար խաղաղ նավահանգիստ մը միշտ, բայց կխոստանա հաղթել այս բոլորին, կխոստանա, եթե Իր հետ մնանք մենք, այս բոլորեն վեր կրնանք ըլլալ և կրնանք ժպտիլ նույնիսկ ամենեն վատ արհավիրքներուն երեսին։

Սիրելինե՛ր, մենք այս կյանքի ընթացքին անապահով ճամփորդություն մը ունինք, չենք գիտեր՝ վաղը ի՞նչ պիտի ըլլա, ի՞նչ պիտի բերե ապագան մեզի համար, և ստիպված ենք մենք այս անապահովությունը ընդունիլ որպես կյանքի մեկ տվյալը և ըստ այնմ ապրիլ և ճշմարիտ ապահովության հետևեն երթալ։

Այսօրվան Ավետարանը նաև մեզ կսորվեցնե, որ մարդիկ, նույնիսկ հավատացյալները, տարօրինակ համառություն մը ունին Աստուծո խոստումներուն թեթևակի մոտենալու, շատ լուրջի չառնելու... մինչև որ Աստծո ըսածները տեղը գան։ Իրապես, մարդկային ցեղի պատմությունը այսպես կսկսի, Աստված ասում է. «Կրնաս ուտել բոլոր ծառերից, բայց այս արգիլված պտուղեն պիտի չուտես, եթե ուտես, կմեռնիս»։

Մեր նախահայրը և նախամայրը լուրջի չառին և կերան և հետո հասկացան, որ Աստված լուրջ է եղեր։ Երբ Աստված մարդկությանն իրենց մեղքերուն համար սաստեց և Նոյին քարոզիչ կարգեց, իրենք չհավատացին, խնդացին Նոյի վրա, որ նավ կշինե, երբ որ անձրև անգամ չի գար, և հետո հասկացան, որ Աստված լուրջ է եղեր։ Երբ Հիսուս նայեց Երուսաղեմի վրա Ձիթենյաց լերան վրայից և ըսավ. «Երուսաղեմ, Երուսաղեմ երանի գիտնայիր, թե ով այցելեց քեզ, քանի-քանի անգամներ հավաքել ուզեցի քեզ Իմ թևերիս տակ, ինչպես մայր հավը կընե, բայց դուք մերժեցիք, անոր համար քար քարի վրա պիտի չմնա այս քաղաքին վրա»։ Հրեաները լուրջի չառին, բայց հետո հասկացան, որ շատ լուրջ է եղեր ասվածը։

Սիրելինե՛ր, Աստված մեզ կըսե, որ դուք մեղավոր եք և պիտի մեռնիք։ Անապահով կյանք մըն է ձերը, բայց ես, որպես սիրող հայր, կկանչեմ ձեզ Իմ ապահովությանս, Ինձ բարեկամ եղեք, եկեք հաշտվեցեք Ինձ հետ և ընդունեցեք Իմ հրավերս, Ինձ հետ ըլլա-

լու, Ինձ հավատալու, աղոթքով քայլելու ձեր ճամփան և սիրով հարության ընթանալու։ Մենք լուրջի պիտի առնե՞նք, թե՞ պիտի չառնենք։ Երբ Տեր Հիսուս կխոսեր ընթրիքի ընթացքին և Աստծո արքայության մասին կխոսեր, դրախտի մասին կխոսեր, ճաշին հրավիրվածներեն մեկը ուրախացավ և ըսավ. «Երանի այն մարդուն, որ ընթրիք պիտի ուտի Աստծո արքայության մեջ»։

Հիսուս ժպտաց և ըսավ, որ չէ, այդպես չէ։ Ամեն մարդ շատ փափագող կերևի, Աստծո արքայության մտնելու, դրախտ երթալու, բայց շատ քիչեր լուրջի կառնեն Աստծո հրավերը, և Հիսուս կսկսի պատմել այս հռչակավոր առակը. «Մեծահարուստ մարդ մը խրախճանք սարքեց, նախօրոք հրավիրեց իր հյուրերը, և երբ որ ժամանակը եկավ և կանչեց իր ծառաները ուղարկելով, անոնցմե մեկը ըսավ՝ ներե ինձ, որովհետև ես արտ մը գնեցի, պետք է այդ արտը տեսնեմ, ինձի հրաժարած սեպե, խնդրեմ։ Ուրիշ մեկը ըսավ՝ հինգ զույգ եզ գնեցի, պետք է փորձեմ այդ եզերն ինչպես են, ներողություն, ես չեմ կրնար գալ։ Իսկ մյուսն ըսավ՝ ես նոր ամուսնացած եմ, չեմ կրնար գալ»։ Բոլորը խոստացած էին գալու, բայց հրավերը մերժեցին։ Տերը բարկացավ։

Տեր Հիսուս Իր ընտրած այդ օրինակները դիպվածավ չընտրեր, արտը մեր կյանքն է, արտը մեր աշխատանքն է, և մենք անոր համար հաճախ կմերժենք Աստծո հրավերը։ Մեր հինգ զույգ եզները մեր հինգ զգայարանքն են, մեր ունեցածն է, անոնց հաճույք տալու համար շատ անգամ մենք կմերժենք Աստուծո հրավերը։ Եվ ի՞նչ է ամուսնությունը, անիկա մեր սեռականության կանչն է, քանի-քանի մարդիկ, քանի-քանի երիտասարդներ այս սեռական խնդիրներու պատճառով չուզեցին մոտենալ Աստուծո։ Քանի-քանի մարդիկ իրենց ընտանիքի խնդիրներով չեն ուզեր մոտենալ Աստուծո, կըսեն որ այնքան զբաղված ենք, որ չենք կրնալ հասնիլ Աստուծո, չենք կրնար ժամանակ տրամադրել։

Երբ որ ես մանուկ էի Կոստանդնուպոլսում, եկեղեցին գրքույկ մը պատրաստեց ժողովրդին տալու համար, որն ուներ երկու նկարներ և այդ նկարներուն տակը պատշաճ խոսակցություններ։ Նկարներեն մեկուն մեջ գործատեր մը կար՝ օֆիսին մեջ նստած, սեղանը թուղթերով լեցուն, դրամարկղը բացված, հոնկե դրամները կերևին և Տեր Հիսուս Քրիստոս դռան առջև կզարնե ու կըսե. «Պարոն, ձեզ հետ խոսիլ կուզեմ ձեր հավիտենական կյանքի մասին», իսկ գործատերը կըսե, որ «ես ալ գիտես թե որքան շատ կուզեմ, բայց կտեսնես որքան զբաղած եմ, խնդրեմ, դուն գնա, հարմար ժամանակ ես քեզ կկանչեմ, կխոսինք»։ Մյուս նկարին մեջն ալ նույն գործատերն է, բայց այս անգամ մահվան անկողինն է։ Պառկել է և մահվան հրեշտակը կեցեր է գլխուն իր մանգաղով և մարդը սարսափահար կըսե. «Այսքան շուտ, ես չէի սպասեր այսքան շուտ, ես պատրաստ չեմ, խնդրեմ գնա, հետո եկուր»։ Բայց մահվան հրեշտակը կպատասխանե. «Ներողություն, կըսե, շատ զբաղած եմ, չեմ կրնար։ Քեզմե հետո որքան-որքան մարդ կա հոգին առնելիք»։ Եվ բրոշուրը կավարտեր սա խոսքերով. «Անոնք, որոնք Աստուծո ժամանակ չունին տրամադրելիք իրենց առողջ ժամանակը, մահվան ժամանակ, առիթ պիտի չունենան ապաշխարելու»։

Սիրելինե՛ր, պետք է մենք պատրաստ ըլլանք ամեն ատեն մեռնելու, թողելու այս աշխարհը։ Այս աշխարհը թողելու համար եկանք մենք։ Կամուրջին վրա տուն չի շին-

վիր, կամուրջը անցնելու համար է, և այս աշխարհն ալ անցնելու համար է, որքան դյուրին կանցնինք հոնտեղեն, այնքան լավ։ Հետևաբար մենք ստիպված ենք, Տիրոջ հրավերը լուրջի առնելու, եթե ոչ ամեն վտանգ մեզ կսպասի այս կյանքին մեջ։

Աստված մեզ կհրավիրե, սիրելինե՛ր, ոչ միայն հավիտենական կյանքի համար, այլ նաև մեր կյանքի ամեն ասպարեզում հաջող ըլլալու համար՝ գործածելով իմաստությունը, գործածելով մեր խելքը, գործածելով մեր խիղճը, որուն մեջեն Աստված մեզ միշտ լավ կյանքի կհրավիրե, միշտ բարի կյանքի կհրավիրե և մենք հաճախ լսել չենք ուզեր այդ հրավերները։

Այսօր տարելիցն է չարաղետ թվականի մը՝ Շիրակի այդ մեծ երկրաշարժը քսան տարիներ առաջ պատահեցավ, և ամբողջ հայությունը և ամբողջ մարդկությունը սուգին մատնեց։ Հազարավորներ կորան մի քանի րոպեի մեջ, տուներ քանդվեցան, դպրոցներ քանդվեցան, կամուրջներ, ճամփաներ քանդվեցան, քանդված երկրի մը վերածվեցավ Շիրակը։ Եվ մեծ վերքեր բացվեցան։ Մենք մոռնալու վրա ենք, եթե մեզ անձնապես չէ դպած այդ երկրաշարժը, բայց վստահ եմ, որ անոնք որոնք ապրեցան և կորսունցուցին թանկագին սիրելիներ, տակավին իրենց սիրտին մեջ այդ վերքը կարյունի։ Եվ պիտի արյունի հարկավ, մինչև վերջ պիտի կրեն այդ հիշատակը իրենց սիրելիներուն։ Եվ մենք այսպես, հավաքված եկեղեցիներու մեջ, ամբողջ աշխարհում հայ եկեղեցիներու, հոգեհանգիստ պիտի կատարենք կորսվածներու հոգիներուն համար։ Սակայն միայն լալ չի բավեր, միայն աղոթել չի բավեր, պետք է մենք մեր դասերը վերցնենք։

Շատ անգամ ես գիտեմ, երբ որ աղետները զարնեն, մինչև այն ատեն Աստծո չաղոթած մարդիկ իրենց մատը կճռճեն Աստծո, Աստուծմե հաշիվ կհարցնեն բարկացած։ Ինչո՞ւ եղավ այս, ինչու արգելք չեղար, բայց Աստված ոչ ոքի չէ խոստացած, որ երկրաշարժ չի պիտի ըլլա։ Երկրաշարժները չեն մեռցներ մարդիկը, տուները կմեռցնեն, լավ չկառուցված տուները կմեռցնեն, պատերեն գողցվաց երկաթները, ցեմենտներն են որ կեանքեր կխլեն։ Անոնք կկործանեն մարդիկ, մենք կկործանենք զմեզ՝ լուրջի չառնելով բնության օրենքները։ Երկրաշարժները շատ օգտակար են այս մոլորակի համար, մեծ էներգիա կպարպեն և կկենդանացնեն այս մոլորակը։ Երկրաշարժները պիտի ըլլան, բայց տարօրինակը այն է, որ որոշ երկրաշարժներ նույն աստիճանի կպատահին, և որոշ տեղեր հազարավոր հոգիներ կկորին, նույն աստիճանի սաստկության կպատահին ուրիշ տեղ, մի քանի հոգիներ հազիվ կկորսնցնեն իրենց կյանքը։

Հետևաբար, սիրելինե՛ր, պետք է մենք լուրջի առնենք բնության կանչը և մեզ ըսված խոսքերը։ Լուրջի պետք է առնենք, երբ որ իմաստությունը կխոսի մեզ հետ ըսելով, որ «Առողջությանդ ուշադիր եղիր, մի ուտեր, չափավոր կեր, չծխես»։ Իսկ մենք լուրջի չենք առներ։ Շատ հագիստ կծխես և կմոռնաս, բայց թոքերդ չեն մոռնար։ Մարմինդ չարաչար կգործադրես, անքուն գիշերներ կանցնես, դուն կմոռնաս, իսկ մարմինդ չմոռնար։ Կնեղանաս, կուլաս, կջղայնանաս, դուն կմոռնաս, մարմինը չմոռնար։ Հետո օր մը հաշվեհարդար կտեսնի քեզ հետ։ Հետևաբար, սիրելինե՛ր, եկեք լուրջի առնենք Տիրոջ՝ մեզ ուղղած խոսքերը, խոստումները։ Բայց նաև լուրջի առնենք Աստծո մեզ խոսած ուրիշ իմաստությունները, որ կուգան մեզ գիտությամբ, փորձառությամբ, իմաստությամբ։ Եկեք ավելի հաստատ երկիր մը կերտենք։ Երկրաշարժները միշտ պիտի ըլլան,

միայն երկիրը պիտի չշարժի, տնտեսությունն ալ կշարժի, նայեցե՛ք, այս օրերուն։ Կշարժի կրթությունը, և չենք գիտեր մենք ինչպես նոր սերունդներ պիտի պատրաստենք։ Շարժումներու պատրաստ պիտի ըլլանք, պետք է ավելի հաստատ հիմնենք մեր կյանքը ազգովին նաև։

Եկեք աղոթենք քսան տարիներ առաջ իրենց կյանքը կորսնցուցած երկրաշարժի զոհերուն համար։ Աստված իրենց կորսնցուցած այս կյանքը, մնացած իրենց կյանքը ավելիով պիտի հատուցանե երկնային օթևաններու մեջ և իր քովը մխիթարե և նաև աղոթենք իրենց սգավոր հարազատների համար, որոնք տակավին կկրեն այդ վերքն իրենց մեջ, Աստված թող մխիթարի իրենց նաև։ Եվ եկեք աղոթենք մենք մեզ համար ևս և ապաշխարենք և ըսենք՝ «Ներե ինձ ալ, Տեր, որովհետև Քո հրավերները լուրջի չեմ առներ։ Այս աշխարհի շատ մը բաները կուգան և Քու սուրբ տեղը կգրավեն, օգնե ինձ, որ ավելի շատ Սուրբ Գիրքը կարդամ, ավելի շատ աղոթեմ, ավելի շատ եկեղեցի գնամ, ավելի շատ Քո Սուրբ անունդ բերնիս մեջ փառաբանվի»։

Այո, աղոթենք, որ Աստված մեզ իմաստություն տա, ավելի հոգևոր հայրենիք մը ունենանք, ավելի իմաստուն, զարգացած և հաստատ հիմերու վրա բարձրացած։

Տերը օրհնե ձեր բոլորը։